նշանին..., կանգնեցի զխաչս (Ամենափրկիչ կոչուածը)», որ մի հոյակապ յուշարձան է այս վաստակաւոր մարդու գեղեցկագիտական ճաշակի և հասկացողութեան։

Խաչարձանի բարձրութիւնը յատակից մինչև գագաթը 5,17 մետր է, պատուանդանի լայնութիւնը միջին մասում 1,47. բուն խաչի բարձրութիւնն է 2,17, իսկ լայնքը 1,08 մետր, երեսը դէպի արևմուտք։ Ճակատի գարնէզի վերայ ելնդաւոր տառերով գրուած է. «Համբարձաւ ի̃ծ աւրհնութի̃ւ եւ տ̃ր մեր ձայ». գարնէզի տակ խորաքանդակ. «աւրհնեալ են փառք տ̃ն ի / տեղոջ իւրում»։ Խաչելութեան ցուցանիչի ելնդաւոր տառերով մակագրուած է. «սայ է թագաւ/որ հրէից», իսկ փոսում, ուր վեցթևեան սերովբէքն են, արեգակն ու լուսինը։ Զարդերի մէջ ելնդաւոր տառերով գրուած է. «ս̃բ ս̃բ ս̃բ տ̃ր զաւրութե̃ց». Յիսուսի գլխին խորաքանդակ՝ «Յ̃ս Ք̃ս»։ Հորիզոնական տախտակի վերայ խորաքանդակ. «ձեռք որ գե/րկլինս արարին տարածեցե/ր ի խաչիս», տարաբաղդաբար աղօտ դուրս եկած մեր լուսանկարում։ Խաչափայտի ներքևի մասում, ուր կանգնած է Յովսէփը, Յիսուսի ոտքերի մօտ խորաքանդակ է. «ս̃բ ի̃ծ / ս̃բ եւ հզ/աւր ս̃բ եւ անմահ որ / խաչեցար ողոր/մեա ի̃ր Յովաննի/սի» — ապա շարունակութիւնը Գողգոթայի բլրի կիսաշրջանի վերայ ելնդաւոր — «ին ստացողի սմա ամէն». վերջին բառը դարձեալ խորաքանդակ։

Խմբանկարի կեդրոնը խաչեցեալի պատկերն է, մակերևոյթից քիչ դուրս ընկած, բայց ոչ մարմնաւորած, այլ հարթ. ձեռքերը զամուած են, թևերը քիչ ճկուած և գլուխը դէպի աջ թեքուած։ Մազերը ալիքաձև, գանգուր, երկու խոպոպներով իջնում են ձախ ուսի վերայ, թուխ ներկուած. միրուքը բոլորակ խուզուած։ Ամօթանքի ծածկոյթը, որ իջնում է մինչև ոտները, գորշ է։ Ոտները մեխուած են իրար հակառակ ուղղութեամբ, կրունկներն իրար կողքի։ Խաչն իրանից պատուանդան ունի, որի վերայ «ս̃բ ատուած»ն էր գրուած, եւ հաստատուած կիսաշրջանաձև Գողգոթայի բլրի վերայ, որի տակ եռամասնեայ կամար և վերին ճակատի կամարի տակ Ադամի գլուխը. կամարների դաշտը արմաւենիկի զարդերով ծածկուած։ Խաչի վերին և հորիզոնական թևերը խաչաձև վերջաւորութիւն ունին։

Խաչի հորիզոնական թևերի տակ կանգնած են՝ աջից Մարիամ և ձախից Յովհաննէս[1]. Մարիամ ձախ ձեռքը դրել է կրծքին, իսկ աջն առաջ մեկնել, երեսը քիչ վեր, աչքերը դէպի հեռուն սևեռած և ոչ դէպի որդին։ Քիթը կոտրած է։ Գլխի լաչակը ճակատին և ուսերի վերայ ծալքերով, իսկ կրկնոցը ուսերի վրայից առաջին մասում իջնում է մինչև ծնկները, յետևից աւելի երկար և վերից վար ծալքաւորած։ Ամբողջ ֆիգուրը մակերևոյթից քիչ դուրս է ընկած, բայց ոչ մարմնաւորած, այլ հարթաքանդակ։ Յովհաննէսը մի ձեռքը ծնօտին, միւսը կրծքին, թւում է փաթոյթ բռնած. միրուքի և բերանի մօտ քիչ վնասուած է։ Հագել է երկար պարեգօտ և վերայից տունիկայ ձգել։ Մարիամից ցած խաչի պատուանդանի մօտ կանգնած է Յովսէփ Արեմաթացին, զօտեւորած պարեգօտով, գօտու կապերը կախուած. միւս կողմից չոքել է Նիկոդիմոս, մի ձեռքին ունելիք, բևեռն է կամենում հանել, իսկ միւսը քիչ վեր բարձրացրած։ Նիկոդիմոսի միրուքը երկար է և ներկած, իսկ Յովսէփինը բոլորակ, խուզած։

Խաչի հորիզոնական թևերից ցած, խաչքարի երկու կողերի վերայ վեց վեց ֆիգուրներ կան, ձեռքերը բաց, աղօթողի դիրքով, որ 12 առաքեալներն են, կեցուածքի և դէմքերի տարբեր ձևերով և արտայայտութիւններով։

Խաչի հորիզոնական թևերից վեր, աջից ճառագայթներով սկաւառակի մէջ արեգակ, իսկ ձախից լուսին, նրանց տակը մի մի քառաթև քերովբէ, իսկ կողերից մի մի կանգնած ֆիգուր, ձեռքներն իրար մօտ, ինչպէս առաքեալներինն էր, դէմքերը նայողին դարձրած։ Ներկած են եղել զգեստները, բայց այժմ խունացած. ձախ ֆիգուրի տօգան կարմրաւուն է, միրուքը քիչ թուխ։ Աւետարանիչների ներկայացուցիչներն են դրանք։ Խաչելութեան ամբողջ մակերևոյթը, ֆիգուրներից զատ, զարդարուած են արմաւենիկի և բուսական մոտիւներով։

---

(1) Երզնկեան (եր. 42) կարծում է Մարիամ Մագդաղենացին է. նոյն սխալը կրկնում է Ե. Լալայեան. Ազգ. Հանդ. VII. եւ VIII 405։